

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՏՍԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
երկի անգլերեն թարգմանությունը. համարժեքության հարցեր

Moses Khorenatsi's History of the Armenians
(translation and commentary on the Literary Sources by R. W. Thomson)
Harvard University Press, 2006:

Լեզուների բազմազանության գիտակցված ընկալումը մարդուն հնարավորություն է ընձեռում հասկանալ և գնահատել օտար լեզվամտածողության ու մշակույթի յուրահատկությունները, և այստեղ է, որ անգնահատելի է դառնում թարգմանության դերը: Հասկանալի է, հետևաբար, թե ինչու մարդը վաղուց ի վեր ջանքեր է գործադրում համարժեք «վերակողմադրելու» ազգային ինքնատիպությամբ օժտված խոսքարվեստի գործերը¹:

Այսօր արդեն թե՛ տեսականորեն և թե՛ գործնական առումով հաստատված է այն ճշմարտությունը, որ պատմիչների երկերի թարգմանությունը որոշակի դժվարություններ է ստեղծում ոչ միայն ժանրային ու իմաստային յուրահատկությունների վերարտադրության տեսանկյունից, այլև այն պատճառով, որ դրանում արծարծվող հարցերը սերտորեն առնչվում են ավանդական ու խորհրդապաշտական բազմաթիվ ազգային արժեքների: Եվ այնուամենայնիվ հայտնի է, որ պատմագրությունը տվյալ ազգի փաստագրական և աղբյուրագիտական հարստությունն է, որի համարժեք թարգմանությունը կարևոր է նրա պատմության ճշմարիտ պատկերը այլոց փոխանցելու առումով: Իսկ ինչ վերաբերում է պատմիչի կողմից ներկայացվող իրադարձությունների ճշմարտացիությանը, ապա այն ստուգվում է հարակից կամ երկրորդական իրողությունների ու աղբյուրների վկայությամբ²:

Հարկ է համաձայնել, որ պատմագրությունն իր գործառնական յուրահատկություններով, լեզվական միավորների, մասնավորապես պատմաբանների, նաև պատկերավոր արտահայտչամիջոցների բազմազանությամբ, իհարկե, ոճաժանրային ինքնատիպ դրսևորում է: Այն մի կողմից նպատակ է հետապնդում հավաստի տեղեկություններ հաղորդել ժամանակի պատմական իրադարձությունների

1 Տե՛ս Ա.Գասպարյան, Լեզվական միավորների հարաբերակցության խնդիրը թարգմանության մեջ / Օտար լեզուները Հայաստանում/, 1/2008, էջ 3-12
2 Տե՛ս Էդ. Ջրբաշյան, Գրականագիտության ներածություն, ԵՊՀ, 1984, Վ. Պարսամյան, Մովսես Խորենացին և հայ պատմագրության ծագումը և զարգացումը, Եր., 1983:

թիվ 3 (28) հոկտեմբեր-դեկտեմբեր 2009

ՎԵՍ ԽԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԽԱՆՐԵԱ

մասին, մյուս կողմից, խտացնելով մարդկության ընդհանուր փորձը և դրա հենքի վրա ներկայացնելով ժամանակի պատմամշակութային անցուդարձի ազգային ընկալումներն ու գնահատականները, ըստ էության, դառնում է գրական-մշակութային ավանդույթի անբաժանելի մաս, ազգային հարստություն:

Սրա վկայությունն է Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկը, որտեղ պատմահայրը, առանց նահանջելու գիտական օբյեկտիվության և ճշմարտացիության սկզբունքից, հավաստի տեղեկություններ է հաղորդում մեր պատմության մասին (մինչև 5-րդ դարը)³: Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկն աչքի է ընկնում ուրույն լեզվական, ռճաժանրային առանձնահատկություններով, որոնց համարժեք թարգմանությունը առանցքային նշանակություն ունի նրանում գերակայող տեղեկատվական գործառույթի իրացումը վերարտադրելու և Հայոց պատմության նշանակալից իրադարձությունների ամբողջությունը ներկայացնելու տեսանկյունից: Մյուս կողմից, իհարկե, չի կարելի անտեսել նաև պատմահոր պատկերավոր մտքի և գեղագիտական ճաշակի դրսևորումները, որոնք հատկապես արտահայտվում են դարձվածային միավորների, փոխաբերական կապակցությունների և ռճաարտահայտչական այլ միջոցների կիրառությամբ: Այս միավորներով հագեցած դրվագները ներգործում են ընթերցողի վրա, տեսանելի դարձնում Հայոց ազգային ինքնության առանձնահատկություններն ու մշակութային գանձերը: Բանն այն է, որ երբ պատմագրությունից դեռևս հստակ չէր սահմանազատվել գեղարվեստական արձակի ժանրը, վերոհիշյալ երկը լավագույնս գոհացնում էր նաև գեղարվեստական հետաքրքրությունները: Այս միտումը նկատելի է ոչ միայն Խորենացու, այլև Բուզանդի, Ագաթանգեղոսի և այլ պատմագիրների աշխատություններում, որոնք պատմական դեպքերն ու դեմքերը պատկերելով յուրահատուկ ռճով, արտահայտչամիջոցների, բովանդակային և ձևակառուցվածքային տարրերի ինքնատիպ ներդաշնավորմամբ, ըստ էության՝ պատմականությունը միահյուսել են գեղարվեստականությանը: Եվ հենց այս լեզվական միավորների բնական ընտրության հենքի վրա է կառուցվում համարժեք թարգմանությունը, դրանց համահունչ և գունեղ ամբողջականությամբ են պայմանավորվում տեքստային հյուսվածքը, կառուցվածքը և խոսքային համատեքստը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ցանկացած թարգմանության մեջ (և Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկի Ռ.Թոմսոնի⁴ իրականացրած անգլերեն թարգմանությունը չի կարող բացառություն լինել) համարժեքությունը պետք է

3 Մ. Խորենացու աղբյուրների ճշմարտացիությունն ու օբյեկտիվությունն ապացուցվել է հայ և օտար պատմաբանների կողմից: Ավելի մանրամասն տես Պ.Սեր-Սկրտչեան, Խորենացու Պատմութեան ուսումնասիրութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 45-46, F.C.Conybeare, The Date of Moses of Khoren, // Byzantinische Zeitschrift, Munich, 1901, N3-4, Բարդուղիմէոս Եպիսկոպոս Գեորգեան ճուղորեանց, Խորենացին Ե. Դարի առաջին քառորդից մատենագիր, Վաղարշապատ, 1908, էջ 20, Ն. Բիւզանդացի և Մարտիրոս Մինասեան, Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց, Ժնև, 1991, էջ 227-230, Գ. Սարգսյան, Մովսես Խորենացու Հայոց Պատմությունը, Եր., 1991, էջ 31, E. Shutz, The Northern Nomads in the "History of Armenia" of 4 Movses Khorenatsi and the Geography and the Testimony of Place Names in Hungary, // Մովսես Խորենացու 1500-ամյակին նվիրված գիտաժողովի դրույթներ, Եր., 1991, Ա.Ավագյան, Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ (քննական տեսություն), Եր., 1998, էջ 122-155, Ա.Թոփչյան, Մովսես Խորենացու հունական աղբյուրների խնդիրը, Եր., 2001, Ա.Մուշեղյան, Մովսես Խորենացու դարը, Եր., 2007:

4 Moses Khorenatsi's History of the Armenians (translation and commentary on the Literary Sources by R. W., Thomson) Harvard University Press, 2006:

հիմնված լինի ոչ միայն ձևի, այլև այդ ձևը կազմող տարաբնույթ լեզվական միավորների՝ տվյալ համատեքստում իրացվող գործառույթների վրա: Պատճառն այն է, որ բնագրի համակարգը տարասեռ գործառույթների (տվյալ դեպքում՝ հաղորդակցական, տեղեկատվական, ներգործման) դիալեկտիկական ամբողջություն է, թեև հասկանալի է, որ յուրաքանչյուր տեքստում՝ կախված բուն հաղորդակցական նպատակից, միշտ էլ գերակայում է այդ գործառույթներից որևէ մեկը, և թարգմանելիս չի կարելի անտեսել այս իրողությունը: Այլ կերպ, թարգմանական գործընթացը նախընտրելի է իրականացնել գործառական մոտեցմամբ: Ռ. Թոմսոնի թարգմանության մեջ, սակայն, մեղմ ասած, պատկերն այլ է:

Հարկ է նշել, որ Խորենացին առաջինն էր, որ ոչ միայն ստեղծեց ամբողջական համակարգված Հայոց պատմություն, այլև, ըստ էության, ինքնուրույն կերպով մշակեց պատմականության սկզբունքը՝ պատմական դեպքերը քննելով, վերլուծելով ու գնահատելով տեղի ու ժամանակի կոնկրետ պայմաններում⁵: Խորենացու ոճի մեծագույն արժանիքներից է նաև այն, որ պատմահայրը փաստերի մատուցումը հաճախ համեմուտ է հուզական-արտահայտչական-գնահատողական տարբեր երանգներով՝ հնարավորություն տալով իր ընթերցողին պատկերացում կազմել նաև հինգերորդ դարի պատկերավոր մտածողության, ազգամշակութային և հոգեբանական յուրահատկությունների մասին: Փաստորեն, չսահմանափակվելով մերկ փաստերի ժամանակագրությունը ներկայացնելով՝ պատմիչը կարողացել է կամրջել հաղորդակցական, գիտական ու գեղարվեստական նպատակներ:

Ռ.Թոմսոնի թարգմանության քննությունը ցույց է տալիս, որ նրանում հաճախ խախտվում է այս եռամիասնությունը: Այն հանգամանքը, որ լեզուների և հատկապես տարբեր լեզվախմբեր ներկայացնող ոչ մերձակից լեզուների միջև կան օբյեկտիվ տարբերություններ՝ ինչպես լեզվական միավորների իմաստային, այնպես էլ կառուցվածքային առումով, իհարկե, փոքր խոչընդոտ չէ համարժեքություն ապահովելու հարցում: Սակայն երբ սրան գումարվում է նաև պատճենումների համատարած, չհիմնավորված գործածությունը թիրախ տեքստում, հատկապես տողատակում առանց լիարժեք մեկնաբանություններ տալու, ապա մնան պարագայում համարժեքությունը հեռու է բավարար լինելուց:

Ռ.Թոմսոնի թարգմանության մեջ պատճենումները հատկապես նկատելի են դարձվածային միավորների մակարդակում: Դարձվածքները պատճենելիս թարգմանիչը պետք է նկատի ունենա մի կարևոր հանգամանք. եթե մի կողմից, պատճենումները հնարավորություն են տալիս ծանոթանալ այլ ժողովրդի մտածողության առանձնահատկություններին, քիչ թե շատ տեսանելի դարձնում դարձվածքի իմաստային հիմքը, ապա մյուս կողմից, լեզվական այս միավորի պատճենման կամ բառացի թարգմանության դեպքում գրեթե լիովին մթազնում են դարձվածքի պատկերավոր, հուզարտահայտչական երանգավորումները, որոնք դարձվածային միավորների ազգամշակութային պատկանելության գրավականն են: Հայտնի է, որ դարձվածային միավորների պատճենումը, ընդհանուր առմամբ, թույլատրելի է այն դեպքում, երբ թիրախ լեզվի դարձվածային ֆոնդում չի արձանագրվում

5 Այս մասին տե՛ս նաև Վ. Պարսամյան, Մովսես Խորենացին և հայ պատմագրության ծագումը և զարգացումը, Եր., 1983, էդ. Ջրբաշյան, Յ. Մախչանյան, Գրականագիտական բառարան, Եր., 1980, Գ. Սարգսյան, Մովսես Խորենացու Յայոց Պատմությունը, Եր. 1991, և այլն:

աղբյուր լեզվի դարձվածային միավորների համարժեք տարբերակը: Այս դեպքում կարելի է առաջնորդվել դարձվածքի բովանդակային համարժեքությանը հասնելու սկզբունքով՝ կիրառելով նկարագրական մեթոդը, որը թերևս ավելի հեշտությամբ կապահովի տեքստերի գործառական համարժեքությունը, քան մերկ պատճենումները:

Քննության առարկա թիրախ տեքստում ազգամշակութային վառ նշույթավորում ունեցող դարձվածային միավորների բառացի թարգմանությունը, և առավել ևս դրանց շրջանցումը խաթարում են այդ լեզվական տարրերի դարձվածային իմաստը, տեքստը գրկում բազմաթիվ իմաստային նրբերանգներից՝ անտեսելով բնագրային միավորների տրամաբանական և պատկերավոր հիմքերը:

Գրաբարում երբեմն հանդիպում են այնպիսի դարձվածային կապակցություններ, որոնց իմաստի վերհանումը պայմանավորված է, նախևառաջ, թարգմանչի հենքային գիտելիքներով և լեզվի հիմնարար իմացությամբ: Այսպես՝

Քայց Երուանդայ գմտաւ ածեալ, թէ որպիսի չար թագաւորութեան սնանին ի Մարս խէթ ի սրտի լեալ՝ ոչ հեշտալի էր նմա քուն: Հանապազ ի յարթնութեան յայն հոգալով, նաև ի քուն անուրջս ահագինս նմին իրի տեսանէր (Մ. Խորենացի, էջ 192):

Քայց Երվանդը շարունակ մտածում էր, թե ինչպիսի չարիք է սնվում նրա թագավորության համար Մարսում*։ Նրա սիրտը լիքն էր կասկածներով, և քունը քաղցր չէր թվում: Արթուն ժամանակ միշտ այս մասին հոգալով՝ քնի մեջ էլ սարսափելի երազներ էր տեսնում այդ առիթով (թարգմ. Ստ. Մալխասյանց, էջ 192):

When Eruand considered what sort of enmity to his kingdom was being nourished in Media, his heart rankled and sleep no longer was sweet for him. While awake he thought continually of that, and even in sleep he saw terrible dreams about the same problem (R. Thomson, 2006, p. 177):

Հատվածը անդրադառնում է Երվանդի մտորումներին ու անհանգստություններին. չէ՞ որ մանուկ Արտաշեսը ողջ էր, գտնվում էր Պարսից թագավորի հովանավորության տակ և կարող էր խաթարել իր թագավորության միասնականությունն ու նպաստել իր մոտալուտ գահընկեցությանը⁶: Պատմահայրը մեծ վարպետությամբ է նկարագրել դրվագի լարվածությունը, որը հատկապես ընդգծվում է խէթ ի սրտի լեալ դարձվածքով: Այն Նոր բառգիրք հայկազեան լեզուի բառարանում (1979, հատոր 1, էջ 943) ամրագրված է հետևյալ իմաստներով. *խէթ - վախ, կասկած, երկիւղ, խէթ սրտիւ - կասկածույ: Թեև թիրախ տեքստում տեղ գտած heart rankled (to rankle - to continue to be remembered with bitterness and anger; if some-*

* Տվյալ պարագայում գործ ունենք «ի Մարս», այսինքն «Մարաստանում» հասկացության ոչ ճիշտ թարգմանության հետ: Խմբ.

6 Տես Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 190-192, նաև Мовсес Хоренаци, История Армении (перевод Г.Саркисяна) Ереван, Айастан, 1990, с. 91-92:

*thing such as an event or a remark rankles, it makes one feel angry or upset for a long time*⁷) պատճենված բառային կապակցությունը ընթերցողին փոխանցում է ընդհանուր իմաստաբովանդակային պատկերը, այդուհանդերձ այն չի հաղորդում հատվածի լարվածությունն ու առնչանակային ենթատեքստը, այն է՝ Երվանդի մտավախություններն ու մտորումները, որոնք ուրվականի նման հետապնդում ու տանջում էին նրան նույնիսկ երագում, և նրա կասկածները ոչ մի կերպ չէին փարատվում: Թիրախ լեզվի դարձվածային ֆունդի զննական ուսումնասիրությունը բացահայտում է համարժեք դարձվածային միավորներ, որոնք արտացոլում են խեթի սրտի լեալ դարձվածքի իմաստը: Այսպես՝ *lie (heavy) at somebody's heart, lose heart*⁸:

Ակնհայտ է նաև, որ դարձվածային միավորները, սերտորեն կապված լինելով մշակույթի հետ, խոսքում ծառայում են որպես ոճավորման կարևոր միջոց, և, եթե դրանք թիրախ տեքստում համապատասխան փոխակերպման չեն ենթարկվում, ապա արդյունքում ունենում ենք թարգմանվող երկի լեզվի ու ոճի բնութագրական գծերի կորուստ: Փորձենք ցույց տալ ասվածը քննարկվող պատմագիտական երկից քաղված այլ օրինակների հիման վրա:

Նոյնպես էր և սան նորա Խոսրովիդուխտ, կուսան համեստ որպես գորինաւոր ոք, և ոչ ամեննին ունել անդուռն բերան, նման այլոց կանանց (Մ. Խորենացի, էջ 272):

Նրա պես էր և նրա սանը, Խոսրովիդուխտը, մի օրինավոր համեստ կույս, և չունէր բոլորովին անդուռն բերան, ուրիշ կանանց մնան (թարգմ. Ստ. Մալխասյանց, էջ 272):

Similarly his foster-daughter Khosroidukht was a modest maiden, like a nun, and did not at all have an open mouth like other women (R. Thomson, 2006, p. 228).

Բերված համատեքստում *անդուռն բերան* դարձվածային միավորի գործածությամբ պատմագիրն, ակնհայտորեն, անդրադառնում և ընդհանրացնելով ներկայացնում է այդ ժամանակաշրջանի կնոջ կերպարը (կամ գուցե կնոջ կերպարն ընդհանրապես), որի համար բնութագրական են ընդգծված շատախոսությունն ու բացբերանությունը: Դարձվածքի փոխաբերական գործածությունն այստեղ հեղինակին թույլ է տալիս ոչ միայն իր երգիծական վերաբերմունքը ներմուծել համատեքստ, այլև, այդ հենքի վրա ներկայացնելով Խոսրովիդուխտի կերպարը, ընթերցողի մոտ պատկերացում ձևավորել իշխանական ծագում ունեցող հայ կնոջ զսպվածության ու բարձր արժանապատվության մասին:

7 Տե՛ս Longman Dictionary of Contemporary English, Harlow & London, Longman, 1978, p.912, Oxford Advanced Learner's Dictionary, Oxford, Oxford University Press, 2001, p.1048:

8 Այս մասին տե՛ս А. Кунин, Англо-русский фразеологический словарь, М., Советская энциклопедия, 1984 ст.375-376, Longman, Dictionary of Idioms, Harlow & London, Longman, 1979, p.204:

Անդրադառնալով թիրախ տեքստին պարզում ենք, որ տվյալ համատեքստում գործ ունենք դարձվածքի մասնակի պատճենման երևույթի հետ. *ունել անդունն քերակն - have an open mouth*: Հասկանալի է, որ անգլիախոս ժողովրդի լեզվամտածողության մեխանիզմներով անհնար է ընկալել հուզարտահայտչական երանգավորումներից, առավել ևս՝ երգիծական արտահայտչականությունից զրկված *have an open mouth* չեզոք արտահայտությունը, որտեղ լիովին բացակայում է բնագրում առկա մշակութային առումով կարևոր ռճական լիցքը: Անգլերենի դարձվածային միավորների և կայուն կապակցությունների մանրազնին ուսումնասիրությամբ բացահայտվում է *loose tongue* դարձվածաբանական միավորը, որը բառարանագրական ավանդույթում վաղուց արդեն հաստատված է որպես անդունն բերան⁹: Չզիտես ինչու թարգմանիչը չի դիմել այս համարաժեք միավորի կիրառությանը: Բերենք ևս մեկ օրինակ.

Իսկ գայր խոշորագեղ և բարձր և կոպտարանձն և տափակաքիթ, խորակն և դժնահայեաց, ի գաւակէ Պասքամայ, ի Հայկայ թոռնէ, Տորք անուն կոչեցեալ, որ վասն առաւել ժահադիմութեան ձայնէին Անգեղեայ, վիթխարի հասակաւ և ուժով: Քանգի կարի ինն անյարմար թուէին և նմա երգ բանից վասն ուժեղութեանն և սրտեայ լինելոյն: Քանգի երգէին նմա բունն հարկանել գործաքար վիմաց ձեռօք, ուր ոչ գոյր գեգութիւն, և ճեղքել ըստ կամաց մեծ և փոքր. և քերել եղնգամբքն և կազմել որպէս տախտակ (Մ. Խորենացի, էջ 129):

Իսկ Տորքին, որ սերված էր Հայկի թոռ Պասքամից, մի տգեղ, բարձր, կոպիտ կազմվածքով, տափակ քթով, փոս ընկած աչքերով, դժնյա հայացքով մարդու, որին սաստիկ տգեղության պատճառով կոչում էին Անգեղյա, որ վիթխարի հասակ և ուժ ունէր: Որովհետև նրա ուժեղության և սրտոտ լինելու պատճառով երգերը պատմում էին նրա մասին չափազանց անհարմար բաներ, երգում էին նրա մասին, իբր թե ձեռք էր զարնում որձաքար ապառաժներին, որոնց վրա ոչ մի ճեղքվածք չկա, ուզածին պես ճեղքում էր մեծ ու փոքր, եղունգներով տաշում էր, տախտակներ էր ձևացնում (թարգմ. Ստ. Մալխասյան, էջ 129):

As governor of the west he appointed a man called Turk', who was deformed, tall, monstrous, with a squashed nose, deep-sunk sockets, and fearsome aspect, from the offspring of Pask'am, grandson of Hayk; they called him Angl because of his great ugliness, a man of gigantic size and strength. The songs about his strength and spiritedness seem very exaggerated. They sang that he took in his fist granite rocks in which there was no crack, and he would crunch them into large and small pieces at will, polish them with nails, and form them into tablet shapes (R. Thomson, 2006, p.139):

Վերոբերյալ դրվագում պատմահայրը վերակերտել և վերաիմաստավորել է 9 St'e J., Seidl, W. McMordie, English Idioms, Oxford, 2003; Oxford Advanced Learner's Dictionary, Oxford, Oxford University Press, 2006, Longman Dictionary of Contemporary English, Harlow & London, Longman, 1978, Webster's Collegiate Dictionary, Fifth Edition, USA Mass., Merriam Co., Publishers, 1947, Ա.Նազարյան, Անգլերեն դարձվածքների ուսումնական համառոտ բառարան, Եր., Ամարաս, 2000թ., Ս.Սեֆերյան և այլք, Իմաստախոս ժողովուրդը (անգլերեն-հայերեն, հայերեն-անգլերեն ասացվածքների և արտահայտությունների ուսումնական բառարան), Եր., Արեգ, 2005:

հայ բանահյուսության կերպարներից մեկին՝ Տորք Անգեղին, օժտելով նրան գերնարդկային գծերով, կիրառելով նրա արտասովոր ուժը չափանշող տարբեր լեզվական միավորներ, և հատկապես *ի բուռն հարկանել* դարձվածային միավորը: Հատկանշական է, որ տվյալ դարձվածքի կազմության մեջ մտնող *հարկանել* միավորի բազմաթիվ իմաստների մեջ հիշատակվում են նաև *կոտորել*, *հալանել* իմաստները¹⁰, մինչդեռ թիրախ համատեքստում տեղ գտած *took in his fist* թարգմանությունը լիովին չի բացահայտում տորքանգեղյան անիրական ուժի ողջ հզորությունը, որն ընդունակ է ձեռքի մեկ հարվածով ժայռեր ճեղքել: Ծիշտ է, իհարկե, որ թարգմանիչը նույն համատեքստում *crunch* բառը գործածելով, փորձում է լրացնել ներգործման կորուստը, բայց սրանով էլ, կարծես, հարցը լիարժեք չի լուծվում, քանի որ *crunch*-ը, առաջին հերթին, մտազուգորդվում է ատամներով կոտրատելու-փշրելու գաղափարի հետ: Առանձին դեպքերում երկի որոշ հատվածների թարգմանության դժվարությունը կապված է բառերի բազմաձայնության հետ, որը տեղ է գտնում տարբեր ոճական հնարների կազմում: Երբեմն միայն հեղինակի ընդհանուր մտադրության մակարդակում է հնարավոր վերլուծել և համարժեք թարգմանել երկում տեղ գտած բառերի բազմաձայնական իրացումները, որոնք իմաստառական մեծ արժեք են, քանի որ արտացոլում են ժամանակի պատկերավոր մտածողության յուրահատկությունները: Ուսումնասիրությունները արդեն ցույց են տվել, որ բազմաձայն բառերը որոշակի թարգմանական դժվարություններ են ստեղծում, երբեմն նույնիսկ օբյեկտիվ պատճառներով¹¹, սակայն Խորենացու երկից քաղված, ստորև բերվող ենթավերնագրի թարգմանությունն այս առումով դժվար է օբյեկտիվորեն հիմնավորված համարել: Այսպես,

Ի վարդապետսն, յինքն և ի ճանապարհորդութիւն ուսմանն,
օրինակաւ *երկնային զարդու* (Մ. Խորենացի, էջ 426):

Ուսուցիչների, իր և ուսումնական ճանապարհորդության
մասին, *երկնային զարդի* նմանությամբ (թարգմ. Ստ.
Մալխասյանց, էջ 426):

On the doctors, (Moses) himself, and his journey for study,
with a simile from the celestial system (R. Thomson, 2006, p. 332):

Ի սկզբանե նշենք, որ այս ենթավերնագիրն, անշուշտ, կարող է իմաստավորվել և մեկնաբանվել լայն համատեքստի հենքի վրա: Ինչպես երևում է ենթագլխի հատկապես առաջին պարբերությունից, ուսումնական ձգտումների իրականացումը պատմափոր համար բովանդակային մի շարք ծալքեր ունի, ու, թերևս, այդ է պատճառը, որ այդ ճամփորդությունը նա արժևորում է՝ զուգահեռ անցկացնելով արեգակնային լույսի կենսական կարևորության հետ, որը համատեքստում իր արտացոլումն է գտնում *օրինակավ երկնային զարդու* փոխաբերական համե-

10 Տե՛ս Նոր բառգիրք Չայկազեան լեզուի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1979, հ.2, էջ 68:
11 Այս մասին տե՛ս С. К. Гаспарян, Лингвопоэтика образного сравнения, Ер., Изд.-во ЕГУ, 1991, 2008:

մատուության¹² միջոցով: Այս համեմատության «խորքային իմաստը» կրթության, հոգու լուսավորության, աշխարհը ճանաչելու և բնության խորհրդավոր գաղտնիքներից տիրելու ցանկությունն է: Համատեքստի ոճական լիցքն ապահովող *երկնային զարդ* արտահայտությունը բնորոշ է հելլենիստական ժամանակաշրջանի մտածելակերպին. ինչպես արեգակն է լուսավորում երկիրը, այնպես էլ կրթված ուսուցիչն իր «հոգևոր հայրերի իմանալի ճառագայթներից մշտապես ցլանալով»¹³ գիտելիքի լույսը փոխանցում է հասարակ մարդկանց: Գրաբարյան *երկնային զարդ* փոխաբերական կապակցության մեջ գործածվող զարդ բառը, ըստ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի բառարանի (1979, հ.1, էջ 718), ունի հետևյալ իմաստները. *յօրինուած վայելչութիւն, երևելի պանունանք, հանդերձանք, շուք, իր.յարդարիչ և յարդարեալ*: Ակնհայտ է, որ ոճական նուրբ երանգավորումներով հագեցած այս բառը նոր, հավելյալ իմաստային աղերսներ է ձեռք բերում վերոբերյալ բնագրում, երբ երկնային զարդի հետ է զուգորդվում ուսումնառության ճամփորդությունը:

Թարգմանիչը, գուցե թե, չընկալելով այս նուրբ համեմատությունը՝ այն թարգմանել է չնշույթավորված, ինչ-որ տեղ տերմինաբանական գործածություն ունեցող *celestial system* (*երկնային կամ աստղային համակարգ*) կապակցության միջոցով, ընդ որում այս ոչ տեղին, չեզոք գործածությունը համատեքստում համապատասխանաբար չի փոխանցում զարդ բառի առնչանակային երանգները. տվյալ դեպքում այն արտահայտում է կրթություն և լուսավորություն սփռելու այն կենսականորեն կարևոր ունակությունը, որը դեռ դարեր շարունակ պիտի պահպաներ հայի գոյությունը: Տարբեր գիտությունների բնագավառում լայն կիառություն ունեցող *system* միավորը ակնհայտորեն չի կարող պատկերավոր հուզարտահայտչական երանգներ ձեռք բերել այս համատեքստում¹⁴: Թարգմանչին չի հաջողվել ճիշտ վերարտադրել երկնային զարդի՝ արեգակի, կենարար ուժի և կրթությամբ փոխանցվող հոգևոր ուժի «ներքին» կապը¹⁵, որի միջոցով Քերթողահայրն ընդգծում է հելլենիստական դարաշրջանում հայ պատմիչների ջանադիր ձգտումը դեպի գիտելիք: Ինչ վերաբերում է աստղագիտության ոլորտում լայն կիրառություն ունեցող *celestial* միավորին, ապա այն, թեև, իր իմաստային կառուցվածքում առկա փոխաբերական երանգների շնորհիվ (*celestial – suggestive of heaven, spiritual, divine*), համապատասխան համատեքստում կարող էր որոշակի բազմաձայնական որակ դրսևորել, տվյալ դեպքում, սակայն, զուգակցվելով *system* գոյականի հետ, կորցնում է այդ հնարավորությունը: Արդյունքում թիրախ տեքստում տեղ է գտնում անհամարժեք փոխակերպություն, որը ոչ միայն պատկերը զրկում է գեղարվեստականությունից, այլև խաթարում համեմատության բնագրային խորքային իմաստը: Ցավոք, թարգմանիչն անտեսել է այս փաստը, նաև

12 Տե՛ս С.К.Гаспарян, Фигура сравнения в функциональном освещении, Ер., Изд-во ЕГУ, 2000:

13 Տե՛ս Մովսես Խորենացի «Պատմութիւն Հայոց» (թարգմ. Ստ. Մախասյանի), Եր., Երևանի համալսարանի հրատ., 1981, էջ 429:

14 Այդ մասին են վկայում A New English Dictionary on Historical Principles (founded mainly on the material collected by the philological society) բառարանում բերված բացատրությունները: (Oxford, Oxford University Press, 1967, Vol 12, p.393)

15 Հայտնի է, որ հենց հինգերորդ դարում էր հատկապես քաջալերվում կրթության և գիտական գիտելիքների ձեռքբերման նպատակներով ճանապարհորդելը դեպի Եգիպտոս, Եդեսիա և հին աշխարհի այլ մշակութային կենտրոններ:

այն, որ արևի լուսատուի պատկերավոր ու խորհրդանշական բազմաթիվ գործածություններ են արձանագրված համաշխարհային գրական-մշակութային ավանդույթում (*the source of light and life, the good eye of the Heavens, the Heart of the Heavens, the diamond of the Heavens, the intellect of the world, the gem of the Sun in the Heavens* և այլն)¹⁶:

Հաջողված չի թվում նաև doctors գոյականի ընտրությունը, որն ըստ էության տարածամանակյա թարգմանության սկզբունքների կոպիտ խախտում է: Արդյոք հինգերորդ դարի բնագրի թարգմանությունը, որն ուղղակիորեն առնչվում է հայոց հոգևոր հայրերի կրթական-լուսավորչական գործունեությանը, չպետք է կողմնորոշեր թարգմանչին ընտրելու ոճական հագեցած լիցքով օժտված preceptor համարժեքը, որի իմաստային դաշտում առկա է “իր սաների ոչ միայն կրթությամբ, այլև բարոյախոգեբանական դաստիարակությամբ զբաղվող ուսուցիչ” երանգը (*precept /fml/ - a rule or principle imposing a particular standard of action or conduct*¹⁷, e.g. “Just follow these few basic precepts and you won’t go far wrong in life.”)¹⁸:

Քննարկվող երկի անգլերեն թարգմանության մեջ դժվար է համաձայնել նաև պատմական մի շարք իրակությունների (historical realia) վերարտադրության սկզբունքներին: Անվիճելի է, իհարկե, որ պատմական իրակությունների համարժեք թարգմանությունը թարգմանագիտության դժվարին ու առավել պակաս ուսումնասիրված խնդիրներից է: Դժվարությունն այն է, որ այս կարգի լեզվական միավորները, բացի իրենց նյութական (առարկայական) բովանդակությունից, որն, անասկած, ազգամշակութային պայմանավորվածություն ունի, նաև որոշակի սոցիալ-պատմական դարաշրջանի արդյունք են և իրենց խորքում խտացնում են տվյալ դարաշրջանի պատմական կոլորիտը: Հասկանալի է, հետևաբար, որ այս միավորների համարժեք վերարտադրությունը թիրախ տեքստում չի կարող գերծմնալ տարածամանակային գործոնի ազդեցությունից:¹⁹ **Հակառակ դեպքում այն կարող է ընկալվել որպես տվյալ ազգի լեզվամտածական յուրահատուկ գծերի և դարաշրջանի պատմամշակութային կոլորիտի կանխամտածված աղավաղման ձգտում, որը հետապնդում է պատմաքաղաքական նպատակներ:**

Այսօրինակ աղավաղումներից ու տվյալ դարաշրջանի պատմական մթնոլորտը չարտացոլող մեկնաբանություններից խուսափելու համար թարգմանության տեսության մեջ առաջարկվում է ելակետային համարել համաժամանակյա/տարածամանակյա թարգմանությունների տարբերակման սկզբունքը:²⁰ Այս դրույթը հատկապես կարևորվում է պատմագրական երկ թարգմանելիս, երբ թարգմանիչը բնագիր տեքստից գտնվում է ժամանակային մեծ հեռավորության վրա և, որ ոչ պակաս կարևոր է, բոլորովին տարբեր սոցիալ-պատմական միջավայրում: Թարգմանիչն այս դեպքում այլ ընտրություն չի կարող ունենալ, քան առաջնորդվել տա-

16 Տե՛ս, օրինակ, J. Chevalier & Alain Gheerbront, Dictionary of Symbols, London, Penguin Books, 1996: 17 Տե՛ս The Heritage Illustrated Dictionary of The English Language, New York, Houghton Mifflin Company, 1973:

18 Տե՛ս The Longman Dictionary of English Language and Culture, England, Eddison Wesley Longman, 1998:

19 Ս. Влахов, С.Флорин, Непереводимое в переводе, М., Высшая школа, 1988, И. Левый, Искусство перевода. М., Прогресс, 1974, А. Федоров, О художественном переводе, Советский писатель, Л., 1941:

20 В.С.Виноградов, Перевод (Общие и лексические вопросы), М., УДК, 2006:

րաժամանակյա թարգմանության սկզբունքով: Սակայն այստեղ էական է նաև, որ թարգմանության գործընթացին նախորդի նախագիտելիքի կուտակման փուլը, ընդ որում ոչ միայն պատմական ու մշակութային, այլև լեզվական, քանի որ լեզվի հարավոփոխ բնույթով պայմանավորված՝ լեզվական տարրերը կարող են զգալի փոփոխությունների ենթարկվել թե՛ ձևային և թե՛ բովանդակային առումով:

Քննության առնենք Խորենացու «Պատմության» հետևյալ հատվածը, որը պարունակում է ազգային երանգավորմամբ լիցքավորված և պատմամշակութային առումով արժեքավոր պատմական իրականություններ:

Եւ կոչեցեալն Բագարատ, որ ի Հրեիցն, շնորհակալութիւն նմա վասն յառաջագոյն անձնատուր ձեռնտուութեանն առ թագաւորն և միամտութեանն և քաջութեանն, զյառաջասացեալ տանուտիրական պատիւն ազգին պարգևելով և իշխել նմա թագ ի գլուխ դնել թագաւորին, և կոչել թագադիր, այլ և ասպետ (Մ. Խորենացի, էջ 122):

Եվ Բագարատ կոչվածին, որ հրեաներից էր ծագում, շնորհակալություն ցույց տալով հենց սկզբից անձնատուր լինելու և թագավորին օժանդակելու համար, ինչպես և նրա հավատարմության և քաջության համար՝ պարգևում է նրան՝ ցեղի վերը հիշված տանուտիրական պատիվը, իրավունք տալով թագ դնել թագավորի գլուխը և կոչվել թագադիր, այլև ասպետ (թարգմ. Ստ. Մալխասյան, էջ 122):

He recompensed the Jew called Bagarat for his previously rendered services to the king and his fidelity and valor by granting to his family the aforementioned rank of tanager; he also gave him the authority to place the crown on the king's head, to be called coronant and aspet, and to wear the lesser diadem of three rows of pearls without gold or gems when he was in attendance at court and in the king's house (R. Thomson, 2006, p. 134):

Բերված համատեքստում Վաղարշակ թագավորը Բագարատին տանուտեր է կարգում և ասպետի կոչում շնորհում իր հավատարմության և քաջության համար: *Saṣnuyēter* և *aspet* բառերը թիրախ տեքստում փոխառված են ըստ գրադարձման կանոնների (*tanuter*; *aspet*):²¹ Չնայած թարգմանական փոխառությունը համարվում է հուսալի միջոց, այդուհանդերձ այս բառային գրադարձումներն ընդունելի չեն, քանի որ չեն բացահայտում տանուտեր և ասպետ բառային միավորների նշանակությունը տվյալ համատեքստում: *Saṣnuyēter* ստուգաբանվում է որպես *gē-ḡasayēter*, *maqasayēter*, *nasḡasayēter*, *ḡḡasayēter*²², և թիրախ լեզվում դրա համարժեք միջլեզվական տարբերակներ կարող են համարվել *tribal head*, *tribal lord*, *tribal ruler* միավորները:²³

Ինչ վերաբերում է ասպետ բառին, ապա այն ծագել է հին պարսկերեն *aspa-*

21 Գրադարձման մի շարք օրինակներ առկա են նաև Ռ.Թոմսոնի թարգմանության այլ համատեքստերում, այսպես՝ ոստան - *ostan* (էջ 116, 136), արտախուր - *artakhur* (էջ 118), տիտս - *tits* (էջ 118), բրեշխ - *bdeashkh* (էջ 138), վիշապս - *vishaps* (էջ 187), հազարապետ - *hazarapet* (էջ 193), դև - *dev* (էջ 412) մարդապետ - *mardapet* (էջ 265) և այլն:

22 Սոր բառգիրք հայկազեան լեզուի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1979, հ.2, էջ 843:

23 Oxford Advanced Learner's Dictionary, Oxford, Oxford University Press, 2001, p.1387:

pati (ձիատեր) (*aspa* - ձի, *pati* - տեր, պեպ) բառից²⁴, որը, ըստ որոշ աղբյուրների, հայերեն է ներմուծվել *ասպեպ* - ձիավոր ազնվական, հեծյալ իշխանավոր նշանակություններով:²⁵ Սրա հետ կապված հետաքրքիր մեկնաբանություններ կարելի է գտնել Ստ. Մալխասյանցի աշխարհաբար թարգմանական տարբերակի ծանոթագրություններում, որտեղ հիշատակելով Մերետին, նա հակված է պնդելու, որ Հայաստանի *ասպեպ*-ը ամբողջ երկրի իշխանն էր, հրամաններ արձակողն ու հրամանատարը: Այս պաշտոնը մեկնաբանելիս Ստ.Մալխասյանցը զուգահեռներ է անցկացնում Պարսից մեծ հագարապետի հետ, որը թագավորի մերձագույն խորհրդականն էր և իրավունք ուներ թագավորի անունից երկիրը կառավարելու:²⁶

Թարգմանության մեջ փոխառելով ասպեպ միավորը՝ Ռ.Թոմսոնը տողատակում տալիս է այս բառի *ձիասպեպ* (*master of the horse*) նշանակությունը, որը տարակուսանք է հարուցում, քանի որ վերը նշված ծանոթագրություններին անտեղյակ լինելու պարագայում անգամ կարելի էր ենթադրել ձիապետին թագադիր կարգելու անհավանականությունը:

Գրադարձման սկզբունքը տվյալ դեպքում հանգեցնում է թիրախ տեքստում չնշույթավորված (թույլ) տարրերի ընտրության, որոնք արհեստականության դրոշմ են կրում, հատկապես որ տողատակի մեկնաբանություններն էլ չեն ներկայացնում ժամանակի հնարավոր իրական պատկերը: Այս կարգի թարգմանական փոխառությունները դուրս չեն գալիս տվյալ ստեղծագործության սահմաններից, համարվում են թարգմանական դիպվածային համարժեքներ և չեն արտացոլվում թիրախ լեզվի բառարաններում, որպես փոխառված բառային միավորներ:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը կարելի է նկատել, որ պատմագրական տեքստի թարգմանության ընթացքում թարգմանչի կողմից առավել մանրազնին ուսումնասիրություն են պահանջում լեզուների միջև առկա մշակութային տարբերությունները և հատկապես՝ պատմական իրակությունները: Հետևաբար, թարգմանիչը մշտապես բախվում է այն հարցին, թե ինչ համապատասխան մեթոդներ պետք է կիրառել բնագրին բնորոշ մշակութային երևույթները համարժեք վերարտադրելու համար: Այսօրինակ լեզվամշակութային դժվարությունները հաճախ հաղթահարվում են ներըմբռնամբ, «անթարգմանելի» կաղապարների և թարգմանագիտական սկզբունքների մանրազնին ուսումնասիրությամբ ու կիրառությամբ, որն էլ հնարավորություն է տալիս ոչ միայն համապատասխանաբար փոխակերպել ձևի և բովանդակության դիալեկտիկական ամբողջությունը, այլև նախադրյալներ է ստեղծում գրողի և թարգմանությունն ընթերցողի փոխըմբռնման համար:

Սեդա Ք. Գասպարյան
բանաս. գիտ. դոկտոր,
Լուիզա Ա. Գասպարյան

Summary

24 Զր. Աճառյան, Դայերեն արձատական բառարան, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1971, հ.1, էջ 274:
25 Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, Եր., Երևանի համալսարանի հրատ., 1979, հ., էջ 316:
26 Մովսես Խորենացի Դայոց պատմություն, թարգմ. Ստ.Մալխասյանցի, Եր., Դայաստան հրատ., 1990, էջ 258-259:

ON THE ENGLISH TRANSLATION OF “HISTORY OF ARMENIA” BY MOVSES KHORENATSI: PROBLEMS OF EQUIVALENCE

Seda Q. Gasparyan
Luiza A. Gasparyan

The paper deals with the study of the English translation of “History of Armenia” by Movses Khorenatsi - a unique monument of the 5th century historical literature the adequate translation of which is of crucial importance as far as the interpretation of Armenian historical, national, cultural and linguistic identities are concerned at the international arena.

The object of our research is the English translation by R. W. Thomson. Its overall study has revealed cases of inadequate translation especially on the lexical level: inaccurate calques of lexical elements, phraseological units among them, obscure transpositions of stylistically connoted words, as well as cases of non-motivated transliteration of elements indicating historical realias.

The research has shown that “History of Armenia” being a real entity of Armenian national historical records is a masterpiece, presenting a skillful intertwinement of the historical, the scientific and the literary - a fact that should have been taken into consideration by the translator.